կենտրոնի բարերարներ Կարեն Մկրտչյանին, Յուրի Սարգսյանին, Արմեն Մկրտչյանին, Իգոր Ջանադովին, Էդուարդ Գասպարյանին, Հովհաննես Գադյանին, Ալբերտ Տապալցյանին, Գագիկ Զաքարյանին, Միքայել Փիլիկյանին, Յուրա Խսայելյանին և Ռուդիկ Ալթունյանին: Հայրապետական օրհնության գրի արժանացան նաև համայնքային կյանքին գործուն մասնակցություն բերող հայորդիներ՝ Խաչատուր Բդոյանը, Ասպդիկ Քոչարյանը, Վլադիմիր Թաթոսովը, Ռուբինա Քալանթարյանը, Կարեն Ակոպովը, Սամվել Մովսիսյանը, Խաչատուր Հարությունյանը, Աշոտ Ներսիսյանը, Վահան Բաբախանյանը, Յուրի Բաբայանը, Նորիկ Պողոսյանը և Սերգեյ Տեր-Գաբրիելյանցը:

Երեկոյան Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր շքախմբով ներկա գտնվեց Մոսկվայի և Սանկտ-Պետերբուրգի հայորդյաց տների սաների համերգին, որով ավարտվեցին Սանկտ-Պետերբուրգի հայ համայնքի 300-ամյակին նվիրված միջոցառումները:

## ԱՎԱՐՏՎԵՑ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՅՑԸ ՍԱՆԿՏ-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ

Հունիսի 29-ի առավոտյան, հովվապետական այցի շրջանակներում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը շքախմբի ուղեկցությամբ այցելեց Վասիլևսկի կղզու վրա գտնվող հայկական գերեզմանատան Ս. Հարություն եկեղեցի:

Տաճարում մատուցված աղոթքից հետո Նորին Սրբությունը ծաղիկներ դրեց գերեզմանատանն ամփոփված՝ հայ ազգի և Սանկտ-Պետերբուրգի հայ համայնքի կյանքում մեծ ներդրում ունեցած նշանավոր հայորդիների շիրիմներին:

Այնուհետև Վեհափառ Հայրապետի գլխավորած պատվիրակությունը մեկնեց Վսեվոլոժսկ շրջկենտրոն, ուր Նորին Սրբությունն այցելեց Ս. Մարիամ Աստվածածին հայկական եկեղեցի՝ կառուցված բարերարությամբ Սամվել Մովսիսյանի: Եկեղեցու մուտքի մոտ Վեհափառ Հայրապետին, թեմակալ առաջնորդին և հայրապետական շքախմբին դիմավորեցին եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Արշակ քահանա Նազարյանը և բարերարը, Վսեվոլոժսկի շրջանի ղեկավար Ալեքսանդր Սոբոլենկոն և Կոլտուշի շրջկենտրոնի ղեկավար Էդուարդ Չիրկոն, Վսեվոլոժսկի բնակիչները: «Հրաշափառի» երգեցողության ներքո Նորին Սրբությունը մուտք գործեց եկեղեցի, ուր հայրապետական իր պատգամն ու օրհնությունը բերեց ներկա ժողովրդին և տեղական իշխանությունների ներկայացուցիչներին: Վեհափառ Հայրապետը նաև մասնավոր գնահատանք հայտնեց եկեղեցու բարերարին, ում ազնիվ աջակցությամբ ստեղծվել են բոլոր անհրաժեշտ պայմանները շրջանի հայության հոգևոր կարիքների բավարարման համար: Իր խոսքում Նորին Սրբությունը հորդորեց հայորդիներին՝ հավատարիմ հայրերի հավատին և ավանդներին՝ պահպանել իրենց լեզուն և մշակույթը և իբրև արժանավոր քաղաքացիներ Ռուսաստանի շարունակել իրենց կարևոր նպաստը բերել երկրի առաջընթացին: Վեհափառի պատգամին հաջորդեց կոմիտասյան «Տէր ողորմեա»-ն, ապա հայրապետական «Պահպանիչ» աղոթքը:

Գարեգին Բ Հայրապետը ծանոթացավ նաև Սամվել Մովսիսյանի հովանավորությամբ Վսևոլոժսկում կառուցվող հայկական հանրակրթական դպրոցի շինարարության ընթացքին: Կոլպուշի մարզկենտրոնում Նորին Սրբությունը ծաղկեպսակ զետեղեց Մեծ հայրենական պատերազմի ընթացքում զոհվածների հուշարձանին, կատարվեց հոգեհանգստյան աղոթք:

Նույն օրը, ավարտելով հովվապետական այցը Սանկտ-Պետերբուրգ` Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնեց Լատվիայի Հանրապետություն:

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀՈՎՎԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑԸ ԼԱՏՎԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Հունիսի 29-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը հովվապետական այցով ժամանեց Լատվիայի Հանրապետության մայրաքաղաք Ռիգա` ուղեկցությամբ Ռուսաստանի և Նոր Նախիջևանի առաջնորդ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանի, հայրապետական շքախմբի և Ռուսաստանի թեմի հայոց քահանայից դասի:

Օդանավակայանում Նորին Սրբությանը դիմավորեցին Լատվիայի հոգևոր հովիվ Տ. Խոսրով քահանա Ստեփանյանը, Լատվիայի Հանրապետությունում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Աշոտ Գալոյանը, հայ համայնքի նախագահ Առնո Տեր-Սահակովը, համայնքի ներկայացուցիչներ:

Նույն օրը երեկոյան Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպում ունեցավ Լատվիայի Հանրապետության նախագահ Վալդիս Զատլերսի հետ: Զրույցի ընթացքում Նորին Սրբությունն իր երախտագիտությունը հայտնեց նախագահին հայ համայնքի հանդեպ Լատվիայի իշխանությունների կողմից ցուցաբերվող մշտական հոգատար վերաբերմունքի և ուշադրության համար:

Իր խոսքում փիար Զատլերսը, ողջունելով Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցը Ռիգա, բարձր գնահատանքով ներկայացրեց հայ համայնքի կարևոր ներդրումը Լատվիայի կյանքում և շնորհավորեց Նորին Սրբությանը Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու կառուցման և օծման առիթով:

Հունիսի 30-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիսապետեց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու օծման արարողությունը, որին ներկա էին Ռուս Ուղղափառ Եկեղեցուց Ալեքսանդր միտրոպոլիտը, Լյութերական Եկեղեցուց Պավել եպիսկոպոսը, քաղաքային իշխանությունների ներկայացուցիչներ և ուխտավորներ` այս առիթով ժամանած Էստոնիայից և Լիտվայից:

Շարականների, սաղմոսների ու աղոթքների ուղեկցությամբ օծվեցին եկեղեցու զանգակատան խաչը, Ս. Սեղանը և սյուները: Օծման արարողությունից հետո Նորին Սրբությունն իր օրհնությունն ու պատգամը բերեց ներկա ժողովրդին: Վեհափառ Հայրապետը գոհունակություն հայտնեց հովվապետական այցով Լատվիայի Հանրապետությունում գտնվելու